

ՊՈՐԺՆԱԿԱՆ ՄԻՋՈՅ

Տեսականը միայն փոքրամասնութեան սեփականութիւնն է. իսկ գործնականութիւնը ընդհանրական է. աշխարհը ամբողջապէս վերցրած գործնական է, տեսականը՝ վերացականը կամ՝ գաղափարականը մատչելի է սակաւներին կամ՝ միմիայն ընտրեալներին. ժողովուրդը, ամբոխը, հասարակութիւնը գործնական է, իսկ նրա ղեկավարները տեսական։ Մտաւոր մարդիկ տեսականն են՝ աէսթետիկներ, տեսականից յառաջանում է գործնականը, որ դառնում է հասարակաց սեպհականութիւն. գործնականի միտքը, խորհուրդը, գաղափարը ընդհանրապէս ժողովուրդը չէ ըմբռնում, բայց փորձով գիտէ, իւրացրած է մի բան կամ հաւատով ընդունած և ունակութիւն է դարձրած իրեն համար։ Որչափ բաներ գիտեն գիւղացիները հողագործութեան, անասնապահութեան, ձեռարուեստի և անոնին կեանքի վերաբերեալ, նրանք այդ բոլորը գործադրում են փորձով, օրինակով, հաւատով ընդունած, աւելի մեքենաբար և համարեա անգիտակցաբար, իրենց արածը մեծ մասով չեն կարող բացատրել կամ պատճառն իմանալ։ Մտաւորական մարդը ինտելիգենտը, ուսումնասիրելով բնութիւնը և ժողովրդի ձեռք բերածը երկար գարեթի փորձառութեամբ, ծնում է նոր գաղափարներ, որոնցով նա կատարելագործում է գործնականը, բարեփոխելով և և բարելաւելով ժողովրդի կեանքը. ժողովուրդը միշտ պէտք ունի սովորելու և անհրաժեշտ է, որ նրա մէջ լինին յոտուկ, միայն տեսականով պարագող և ուսուցանող մարդիկ, այս անտարակոյս այդպէս է և ճշմարիտ։

Ժողովրդական կեանքը բացի, այսպէս ասած, աշխարհային կողմից, գործնականից, ունի նաև հոգեւոր կեանքի պահանջներ և այն շատ ստիպողաբար, որոնց վրայ անհնար է չըգործնել խորին և լուրջ ուշադրութիւն, վասն զի ժողովրդի կեանքի հոգեւոր պահանջները անխնամ և անփոյթ թողնելով, առաջանում է վարք ու բարքի ապա-

կանութիւն, յետադիմում է ժողովուրդը, այլասեռում, առանց վեճ գաղափարների—հուսալի՝ կանքը դժօրք է դառնում:

Եւ միմիայն Քրիստոնէութիւնն է, որ տալիս է մեզ ամենավեճ և կատարելագոյն իդէալներ, սրբացնում, ազնուացնում է մարդին, նրան դնում է աննահանջ, յաւիտենական յառաջադիմութեան, լուսաւորութեան ճանապարհի վրայ, ուստի չըպէտք է թոյլ տալ, որ Քրիստոնէութիւնը խամրի մեր ժողովրդի մէջ, այլ պէտք է հոգավ գործնական, ժողովրդական միջոցների կիրառութեամբ պահպանել, աճեցնել նրա մէջ առանձին ջերմեռանդ խնամքով՝ քրիստոնէական կենսատու, փրկարար սերմերը. քրիստոնէութիւնը իւր պարզութեամբ մատչելի լինելով մանուկին անգամ և վայրենի մեծացած մարդուն իսկ, դրանով հանդերձ նա ամենալուսաւոր դարերի սեպհական հաւատ է, վասն զի նա ամենագեղեցիկ և անհասանելի բարձր գաղափարներով բաւարարութիւն է տալիս ամենահանճարեղ մտքին և ամենակիրթ ճաշակին: Ինչպէս ամեն բանի մէջ, այնպէս էլ ժողովրդական մասսան քրիստոնէական հաւատի մէջ կըթելու և պահպանելու համար պիտի դիմել գործնական մեթոդի: Եթէ այժմ՝ մենք ամենքս էլ ասում ենք, հայ եկեղեցին նուազած է և կարօտ է վերանորոգութեան, դրանով ի իհարկէ պիտի հասկանանք այն, որ ժողովրդի մէջ բացակայում է քրիստոնեւոյել կենցաղը, որ թուլացել է նրա մէջ սուրբ Աւետարանի կրթութիւնը. դրա պատճառները բազմազան են և այն՝ արտաքին աշխարհային հանգամանքներից յառաջացած և ոչ այնքան եկեղեցու կազմակերպութիւնից, այնպէս որ, վերոյիշեալ թերութիւնը ուղղելու համար ոչ այնքան կարիք կայ նոր տէօրեանների կամ կարգերի, որչափ աւելի կարիք կայ ուղղակի սկսել կրթել ժողովրդին Աւետարանական ուսմամբ և քարոզութեամբ, պատրաստել ուսեալ, սուրբ գիրք խմացող, մեկնող հովիւներ, դրանով միայն ինքն իրան եկեղեցին կըվերածնի և ոչ թէ յեղակարծ, դարերով մարմնացարժ կարգերի փոփոխմամբ:

Այժմ՝ եկեղեցու մէջ երկրորդական բաները, օրինակ արարողութիւնները, ծէսերը, էականի, սուրբ գրքի կրթութեան բացակայութեամբ, առաջնակարգ տեղ են բռնել և ի հարկէ բաւականութիւն չեն տալիս, այլ տրտունջ են յարուցանում. խնդիրը այդ երկրորդական բաների մէջ չէ, այլ երբ էականը լինի եկեղեցու մէջ, այնէ սուրբ Աւետարանի քարոզութիւն և հմուտ, լուսաւոր հովիւներ, այն ժամանակ երկրորդական բաները իրենց տեղը կը բռնեն և իրենց նշանակութիւնը կ'ունենան և ոչ աւելի, ինչպէս այժմս է, երբ մեր մէջ քրիստոնէութիւնը դարձել է միայն ծէս և արարողութիւն, այն էլ շատ թոյլ կերպով: Երկրորդականի վրայ համարեա ուշադրութիւն չը դարձնելով, մենք մեր բոլոր հոգսը պիտի նուիրենք եկեղեցու էականին, որ է նրա քարոզութիւնը, դրա բացակայութիւնն է եկեղեցուն խտրացնողը, նրա դատարակիչ ազդեցութեան թուլացնողը: Տուէք հայ եկեղեցուն այդ հիմնական, էական պակասը լրացնող բանիւնը քարոզիչներ և նա, այդ եկեղեցին, կը վերածնի, այդ է միայն նրա ամենախոշոր և կենսական պակասութիւնը, թէ չէ նա իւր երկրորդական բաներով, ծէսերով և արարողութիւններով՝ գեղեցիկ է, ազդու և կրթիչ, ժողովրդական մասնայի համար նշանակութիւն չունին դաւանանքի և այլ կարգերի նրբութիւնները և նրանց խորհրդաւորութեան իմաստը, ժողովուրդը, որպէս գործնական տարր, կրօնի վերաբերմամբ էլ ընդունում է միայն նրա գործնական հետեւանքները իւր հոգեկան խաղաղութեան և բարւօք կեանքի համար: Առանց խօսքի ներգործութեան չի կարելի մի դադափար տարրացնել ժողովրդի մէջ. միակ, բացարձակ զէնքն է կենդանի խօսքը, գիրը, ընթերցումը, պատկերը, արձանը, երգը, հանգէսները, ծէսերը, արարողութիւնները և այլն միայն օժանդակ, նպաստող միջոցներ են. էականը, հիմնականը կենդանի խօսքն է անպայման. նա ամեն դատարակութեան, ամեն խնդրի և դադափարի արժարժման հզօր միջոցն է. դրա համար խօսքի ազատութիւնը մի էական դաւանանք է:

Անկասկած է, որ մեր մէջ կենդանի խօսքը, այսինքն քարոզութիւնը շատ զարգացած է եղել. ինչպէս յուշարձան վկայ են այդ բանին անթիւ հաստատօր քարոզ— գրքերը և ճառընտիրները, բացի գրանից քարոզչութեան շնորհիւ էին առաջուայ կուսակրօնները հայթայթում իրենց ապրուստը և պահպանում եկեղեցիները և վանքերը, յայտնի է շրջիկ նսւիրակ—քարոզիչների կատարած դերը: Այն ժամանակ առաջնորդները և յաջորդները ապահովուած չէին ռոճկով՝ ինչպէս հիմայ. թղթեր ստորագրելով չէին հովում հօտը, այլ անմիջական յարաբերութեան մէջ էին ժողովրդի հետ. կենդանի խօսքն էր, քարոզութիւնն էր նրանց կապը: Այդ կապը շատ թուլացաւ, երբ բիւրօկրատիական վարչական ձեւեր մտան մեր մէջ. հովիւ—քարոզիչը իւր դերը փոխեց և դարձաւ աստիճանաւոր պաշտօնեայ վարձկան ռոճկով. սկսեց գործ ունենալ թղթերի հետ քան թէ կենդանի մարդկանց հետ, դադարեց շրջելը, այցելելը ժողովրդին և քարոզելը, դադարեց ժողովրդի կրօնական—Աւետարանական դաստիարակութիւնը քարոզութեան միջոցով. Հետեանքն այն եղաւ, որ այսօր ասում ենք պատրաստուած հոգեւորականների չունենք, ժողովուրդը թուլացել է հաւատից, եկեղեցին խամրած է և այլն: Այդ բոլորի գլխաւոր պատճառը մէկ է, այն է, որ եկեղեցուց վերացել է կենդանի խօսքի ներդրածական հզօր ոյժը և պարզ է, որ չարիքի միակ դարմանն է լրացնել եկեղեցու այդ էական պակասը, անյապաղ պատրաստելով քարոզել իմացող, կենդանի խօսքին տիրող Աւետարանիչ—հովիւներ. այդ է մեր եկեղեցու վերածնութեան միակ գործնական միջոցը:

Ն. Վ. Տ. Ա.

17 Յնվր. 1909 թ. էջ.

